Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 04

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի հեռակա արտահերթ նիստի

ք. Երևան 30 նոյեմբերի 2020թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի նախագահի 2020 թվականի նոյեմբերի 19-ի N 09-Լ որոշմամբ և հիմք ընդունելով 2019 թվականի օգոստոսի 8-ի ՀՀ կառավարության N 1000-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը, կայացել է՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) արտահերթ նիստ:

Համաձայն 2019 թվականի օգոստոսի 8-ի ՀՀ կառավարության N 1000-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 19-րդ կետի՝ եթե էլեկտրոնային կարգով քվեարկել է խորհրդի անդամների 2/3-ից ավելին, ապա քվեարկությունը կհամարվի կայացած:

Էլեկտրոնային կարգով քվեարկել է՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Սուրեն Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1
«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդվածով նախատեսված տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու վերաբերյալ,

Հարց 2
Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու վերաբերյալ,

Հարց 3
Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու վերաբերյալ,

Էլեկտրոնային քվեարկությամբ Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդվածով նախատեսված տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների 2021 թվականի տարեկան ծրագիրը:

Միաձայն

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Կողմ-8, Դեմ-1

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2021 թվականի տարեկան ծրագիրը:

Միաձայն

Խորհրդի դիտարկումները.

Հարց 1-ին

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Պերճ Խաչատրյանը քվերարկել է ԿՈՂՄ՝ ներկայացնելով իր դիտարկումը՝ ***«Ստուգման տարեկան ծրագրից պարզ չէ, թե ինչ սկզբունքով են ընտրվել այն կազմակերպությունները, որտեղ նախատեսված է իրականացնել ստուգումները: Պարզ չէ, թե արդյոք հաշվի են առնվել տվյալ կազմակերպություններում նախկինում իրականացված ստուգումների արդյունքները, ինչպես նաև այն շարժառիթները, որոնցով առաջնորդվելով ծրագրում ընդգրկվել են կազմակերպություններ, որտեղ նախորդ ստուգումն ավարտվել է 2020 թվականի հունիսին, որոնք չեն գործում դեռևս 2013 թվականից և որոնց ընդերքօգտագործման թույլտվության դադարեցման մասին հրաման է ընդունված:***

Անհասկանալի է նաև, թե ինչ սկզբունքով է որոշվել ստուգվող կազմակերպությունների թիվը՝ 100, երբ 2020 թվականին տարեկան ծրագրի հիման իրականացվել է մոտ 50 ստուգում:

Ավելի նպատակահարմար կլիներ, որպեսզի ստուգումների տարեկան ծրագրի նախագիծը խորհրդին ներկայացվեր ավելի վաղ, բովանդակալից քննարկում կազմակերպելու և բոլոր հարցերի պատասխանները պարզելու համար»:

Հարց 2-ի վերաբերյալ՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Պերճ Խաչատրյանը քվերարկել է ԴԵՄ՝ ներկայացնելով իր դիտարկումը՝ ***«Տարեկան ծրագրի նախագիծը կազմված է թերի, տեսչական մարմնի վերահսկողության ներքո գտնվող ոլորտներում տիրող իրավիճակը ներկայացված է շատ համառոտ, շրջանցված են առկա խնդիրները, որոնք շատ դեպքերում կապված են նաև այլ պետական մարմինների գործունեության հետ»***:

Էլեկտրոնային քվեարկությամբ որոշումներն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Ռ. Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____ Հ. Բարսեղյան